

## ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24/7

23 հունիսի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Բարիս Մարտիրոսյանի 29.05.2015 թ-ի և 23.06.2015 թ-ի գրություններով բերված գանգատը ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի 31.03.2015 թ-ին թիվ 141 որոշման դեմ:

### Ա/Ձ Բարիս Մարտիրոսյանի գանգատում բերված փաստարկները.

Ի լրումն 2015թ.-ի մայիսի 29-ի գանգատի ստորև ներկայացվում են իրավական հիմքերը, որոնց խախտմամբ է կայացվել գումար գանձելու մասին թիվ 141 որոշումը:

1. Թիվ 141 որոշման ներքևի մասում գրված է ստացա որոշման օրինակը, որը ստորագրվել է ոչ Ա/Ձ Բարիս Մարտիրոսյանի կողմից: Այդ փաստով խախտվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ պարբերությունների դրույթները:

2. Թիվ 141 որոշման մեջ գրված է, որ Նոր Նորքի ՀՏ պետը քննարկել է Բարիս Մարտիրոսյան Ա/Ձ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը: Այսինքն, վարչական վարույթ է եղել: Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետի 1. Վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից, իսկ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետի՝ Վարչական վարույթի մասնակիցներն են (այսուհետ՝ վարույթի մասնակիցներ)՝

ա) վարչական ակտի հասցեատերը՝ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ:

Սույն իրավահարաբերության նկատմամբ կիրառելի է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին:

Վարչական մարմինը ունի պատշաճ ծանուցման ձևի ընտրության հայեցողություն՝ ընտրելու ծանուցման ձևը, որը պետք է համապատասխանի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի քննության մասին վարույթի մասնակիցներին ծանուցելը պետք է նպատակ հետապնդի ապահովել անձի լսելու իրավունքը, ինչը հնարավորություն կտա վերջինիս լիարժեք իրականացնել իր իրավունքների պաշտպանությունը: Հետևաբար, վարչական մարմնի կողմից ընտրվող պատշաճ ծանուցման ձևը պետք է լինի այնպիսին, որ անձին հնարավորություն ընձեռի ապահովել վերջինիս լսված լինելու իրավունքի իրականացումը:

Ելնելով վերոգրյալից՝ Տեսչությունը ծանուցելու օրենքով սահմանված իր հայեցողությունն իրականացրել է ոչ պատշաճ, ինչի արդյունքում չի ապահովել անձի լսված լինելու իրավունքը՝ գրկելով վերջինիս իր իրավունքների լիարժեք

պաշտպանության հնարավորությունից: Դրանով իսկ խախտվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները: 2. Վարչական մարմինն իրավունք չունի չընդունելու վարչական վարույթի մասնակիցների ներկայացրած՝ վարույթին առնչվող դիմումները և փաստաթղթերը, որոնց քննարկումը մտնում է իր իրավասության մեջ:

Նույն օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

3. ՀՀ ՖՆ Նոր Նորքի հարկային տեսչության աշխատակիցն իրավունք չունի կիրառելու «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքը առ 15.01.2013թ.-ի ապառքի համար, քանզի օրենքը ամբողջությամբ ուժը կորցրել է 01.01.2013 թ-ին: Ըստ օրենսդրի այն համարվել է սոցիալական ապահովության վճար, այլ ոչ թե հարկ, հետևաբար խնդրվում է հետ վերադարձնել վճարված 18000 դրամը:

4. 15 հոկտեմբերի 2014թ.-ին գրավոր դիմում է ներկայացվել ՀՀ Ֆինանսների նախարարի տեղակալ, գլխավոր գանձապետին տրամադրելու տեղեկատվություն կենտրոնական գանձապետարանի 900005035036 հաշվի համարին Ա/Ձ Բարիս Մարտիրոսյանի կողմից 2006 թ-ի հոկտեմբեր ամսից փոխանցված սոցիալական ապահովության վճարների մասին սպառիչ տեղեկատվություն: Դիմումին մինչ օրս չի պատասխանվել:

Այդ պաշտոնական պատասխան հաստատումը անհրաժեշտ էր համեմատելու վճարված վճարային հանձնարարականների հետ և պարզելու հիմնավորվածությունը չվճարված սոցիալական ապահովության վճարների առաջացման հետ կապված: Արդյունքում խախտվել է ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի երրորդ մասի, 27 հոդվածի, 27.1 հոդվածի պահանջները, քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի դրույթը:

Ելնելով վերոգրյալ փաստական և իրավական հիմքերից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի դրույթներով գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել Տեսչության 31.03.2015 թ-ի թիվ 141 որոշումը:

### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Բարիս Մարտիրոսյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 31.03.2015 թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները

կազմում են 59.229 դրամ, որից պարտադիր սոցիալական ապահովության վճար 59.229 դրամ (2009 թ. նոյեմբերից 2012թ. դեկտեմբեր ամիսների հաշվարկ), որը ենթակա է գանձման: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի կողմից 31.03.2015 թ-ին ընդունվել է թիվ 141 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Բարիս Մարտիրոսյանից 59.229 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Գանգատում բերված պնդումների վերաբերյալ, որ Ա/Ձ Բարիս Մարտիրոսյանին չի ծանուցվել ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ-ում հարուցված վարչական վարույթին մասնակցելու վերաբերյալ, որի արդյունքում ընդունվել է Որոշումը, հարկ է նշել հետևյալը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 33-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթը հարուցվում է այն գործողության (գործողությունների) սկսման օրվանից, որը նպատակամղված է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտի ընդունմանը:

Նույն Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է:

Իր հերթին, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի համաձայն՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Քննարկվող դեպքում հարկ վճարողից ժամանակին չվճարված պարտավորությունների գումարները գանձելու նպատակով հարուցված վարչական վարույթի մասին գանգատաբերին ծանուցելու պարտականություն չի առաջացել, քանի որ Որոշումն ընդունվել է հարկային մարմնում առկա ապացույցների հիման վրա, երբ վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցել երեք օրը:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ Որոշմամբ գանձման առաջադրված գումարը, որն իրենից ներկայացնում է սոցիալական ապահովության վճարի գծով պարտավորություն, Ա/Ձ Բարիս Մարտիրոսյանի կողմից պետք է վճարվեր թիվ 900005035036 հաշվեհամարին: Սակայն, 29.05.2015 թ-ին Ա/Ձ Բարիս Մարտիրոսյանի կողմից 60.000 դրամ վճարվել է 900005000188 հաշվեհամարին, որը տարեկան սոցիալական վճարի հաշվեհամարն է: Ընդ որում հարկ է նշել, որ վճարման անդորրագրում հստակ նշված է վճարվող գումարի նպատակը, այն է՝ ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի 31.03.2015 թ-ին թիվ 141 որոշման համար:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե

նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ գանգատը ենթակա է բավարարման, քանի որ քննարկվող դեպքում, ըստ էության, Ա/Ձ Բարիս Մարտիրոսյանի վրա Որոշմամբ դրված պարտավորությունը բովանդակային առումով կատարված է:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Ա/Ձ Բարիս Մարտիրոսյանի 29.05.2015 թ-ի և 23.06.2015 թ-ի գրություններով բերված գանգատը բավարարել:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝

